

Արաբ աշխարհագիրները եւ պատմիչներ Արտաշատ-Դուինը կը կոչէին Քարիաթ-Ալ-Բըրմըզ կամ պարզապէս Ալ-Բըրմըզ: Անոյ ԺԴ դարեան արձանագրութեանց մէջ կան օրինական եւ հարկային կարգադրութիւններ ներկարարներուն մասին: (Տես՝ Շիրակ, էջ 62բ):

Թուրքեր Փրանսացին իր Հայաստան կատարած ուղևորութեան առթիւ (1699-1702) կը վկայէ որ Թիֆլիսի հայ վաճառականներէն ոմանք «Թիֆլիսի շրջականներէն եւ Վրաստանի ուրիշ մասերէն 2000 ուղտի բեռ պոյա (թուրքերէն, կը նշանակէ ներկ) կը զրկեն էրզուրում, ուրիշ կ'երթայ Տիարպէքեր եւ հոն կը գործածուի ներկելու համար հիւսուածեղէններ, որոնք Լեհաստան կը զրկուին: Վրաստանէն կը զրկուի (տորոն) արմատէն մեծ քանակութեամբ Հնդկաստան, ուր կը շինուին նրբագոյն ներկուած հիւսուածեղէններ»⁽¹⁹⁾: Փրանսացին այս տորոնին «պոյա» ներկ ընդհանուր անունը կու տայ: Իրմէ դար մը առաջ ուրիշ գրող ուղեգիր մը, Բետրոյ Քէիքսերա, Վրաստանէն եւ Կովկասէն արտահանուած ներկերուն կարգին կը յիշէ այս տորոնը (մատէր)⁽²⁰⁾:

Հայերը ի Կովկաս լեզվիներուն կը տանէին պարսկական տպածոյ եւ ուրիշ արտադրութիւններ եւ կը փոխանակէին տորոն (մատէր) նոյնիսկ 1740ական թիւերուն⁽²¹⁾: Տորոնէն զատ ուրիշ ներկանիւթերով ալ կը զրաղէին հայ առեւտրականները. օրինակ, ինտիկո (լաճիփերտ - լազուարդ) որ նոյնիսկ 1620-27 թուականներուն հայ վաճառականներ Հնդկաստանի մէջ ատոր առուծախով կը զրաղէին: 1745ական թուականներուն Մէշէտի (Պարսկաստան) մաքսատան տուեալներով հայերը հոն կը ներածէին 500 պաթման ամերիկեան ինտիկոյ, որ Փրանսացիք Թուրքիա կը բերէին, որոնցմէ հայ վաճառականները կը գնէին: Դարձեալ նոյն ատենները Ռէշտէն կը բերէին Մէշէտի չուկային համար 300 պաթման միջատակարմիր (գոչինել)⁽²²⁾:

Հայերուն ճարպիկութիւնը ներկարարութեան մէջ հեշտութեամբ կը հաստատուի հետեւեալ վկայութեամբ Miss Pardoe անգլուհին որ կը գրէ. «Գործարանը (էյուպի արքունի Փէսի ներկարանը) թելադրուած եւ հիմնուած էր Էօմէր Լուիֆի էֆէնտիէ, որովհետեւ Սուլթանը ստիպուած էր չափազանց բարձր գին վճարել Թունուզցիներու, որոնց բուն գործն էր այս արտադրութիւնը, այսինքն Սուլթանին բանակին Փէս հայթայթելը: Էօմէր էֆէնտի համոզած ըլլալով որ խումբ մը արաբ արհեստաւորներ Թունուզէն իրեն ընկերանան գէպի Կ. Պոլիս, զանոնք բերաւ եւ հաստատեց հին պալատին մէջ (էյուպի), որուն տեղը շինուած է արդի գեղեցիկ շէնքը, եւ անոնց առաջնոր-

(19) A Voyage into the Levant, London, 1741, Vol. III, p. 154.

(20) The Travelsff London, 1902, p. 245.

(21) British Trade over the Caspian Sea. — Jonas Hanway, London, 1754, Vol. I, p. 258.

(22) Անդ, էջ 296: